

## ԿՈՉԵՆ ԳԻՒՂԻ ԱԼԵՐՈՒՄԸ

(Նարունակութիւն)

Բ.

Կողեն գիւղը. Նրա անցեալը. Յարձակումները Կողենի վերայ. Կողենցոց փախուստը դեպի Մանսուրի գիւղը եւ կրկին վերադար. Կողենցոց գերի զնալը դեպի Բոզադանի եւ Կարախանի քուրք գիւղերը. Կողենի կողոպտումը եւ վերջնական աւերեումը.

Կողեն գիւղը հիմնուած է Կուր գետի աջափնեայ դաշտավայրում և Կուր գետի աջ ափում, Թիֆլիզ-Բագու երկաթուղու «Թովուղ» կայարանից միայն 13 վերստ հեռու գեղի հիւսիս-արևելք, աշխարհագրական 150° 27' արևելեան երկայնութեան և 41° 6' հիւսիսային լայնութեան աստիճան-ների տակ:

Բաղա գիւղի նման՝ Կողենը միակ հայ գիւղն է որ, առանց հայ բնակչութեան դրացիութեան, բոլորովին միայնակ դրած է բազմաթիւ թուրք գիւղերի կենդրոնում, ուր դարերի ընթացքում կարողացել է պահպանել իւր գոյութիւնը, այլ և մինչև անդամ հասնել տնտեսական աչքի զառնող բարօրութեան: Նրան շրջապատում են հետեւեալ թքաբնակ գիւղերը. Մանսուրի, Կարախանի, Ալիմարդանի, Սամադբայլի, Բողադալի և այլ շատ գիւղեր:

Կողենը փոքր գիւղ է մոտ 30 տնով: Նրա բնակիչները Ռւտիացոց մնացորդներ են, բայց հայադաւան և հայախօս: Բոլորն էլ բնակւում են գիւղում, աշխատութեան չեն գնում օտար քաղաքներ, ըստ որում ունին շատ և պարարտ պետական հողաբաժին, ընդարձակ այգիներ և զբաղուած են ուրեմն հողադորձութեամբ, այդեւանութեամբ և գինեգործութեամբ և հէնց այդ ճանապարհով էլ հասել էին տնտեսական բարօրութեան:

Հանդուցեալ Ալէքսանդր Նրիցեանը, որ տնտեսական կողմից ուսումնասիրել էր Ղազախի գաւառի հայ և թուրք գիւղերը և նրանց շաքում Կողենը, վերջենիս մասին տալիս է հետեւեալ տեղեկութիւնը: «Կարծես թուրքերի դրացիութիւնից խոյս տալու մտքով՝ հայերը խմբուել են աւելի

բարձրադիր տեղերում։ Միակ բացառութիւն պէտք է համարել պետական հողի վերայ կըուզէն դիւղը, որ գրած է Կուր գետի ափում և շրջապատուած է թուրք ազգաբնակչութեամբ։ Միջին դարերում, ինչպէս յիշատակում են տարեգրութիւնները, կըուզէն գեւզում ընակւում էին Աւտիացիները, որոնք բազմաթիւ էին։ Զբանցքների հետքերը, այդիների մնացորդները, ընդարձակ վլատակները մասամբ հաստատում են այն աւանդութիւնը որ այս տեղ եղել է աւելի քան 700 ժութ։

«Հին Աւտիացիների սերունդը մնում է այստեղ մինչեւ այժմ։ Նրանք հայացել են, խոստովանում են Լուսաւորչական հաւատը և խօսում են հայկական լեզուով։ Ոմանք յիշում են և ուտիական լեզուն, այլ և իւրեանց ցեղական ծագումը։»

«Տաշաբաղտաբար, կըուզէն գեւզի ընակչութիւնը, տեղական կլիմայական ևայլ պայմանների ու իրանց կացութեան շնորհիւ նշարելի կերպով և արագապէս նուտղում է։ Այսպէս 1873թուի մարդահամարութեամբ 29 ժութ էին և 198 երկուու հոգի, 1885 թուին 26 տուն ժութ էին և 132 հոգի, այսինքն իւրաքանչիւր տարի, միջին թուով պակասում է 5½ հոգի։ Այնուամենայնիւ կըուզէնցիք խիստ կապուած են իրանց ծննդավայրին, ունեսոր են և ամբողջովին անձնատուր են այդեղործութեան և գինեգործութեան։» \*

Ականատես Երիցեանի խօսքերից երեսում է, որ զեռինսունական թուականներում կըուզէնցիք ընդհանրապէս հարուստ էին և անձնատուր էին գինեգործութեան։ Այսքանը բաւական է որ կըուզէնցիկ շարժէին թուրք դրացիների նախանձը։ Վերջին տեղեկութիւններից երեսում է որ դրացի շըրջապատող թուրք ազգաբնակչութիւնը, մանաւանդ բողազանլուեցիք նենդութեամբ էին նայում կըուզէնի հարստութեան վերայ։ Եւ դրան վրայ հասաւ նրանց համար ամենայաջող ըուպէ, այն է Գանձակի անկարգութիւնը և մօտիկից անցնող երկաթուղու պաշարումը թուրք հերոսակների կողմից։ Առաջին գլխումը յիշատակեցի թէ ինչպէս անարգել և հեշտութեամբ տիրապետեցին թուրքերը երկաթուղու գիծը։ Այս հանգամանքից յետոյ էլ ինչը կարող էր արդեւք լինել թուրքերին կըուզէնը պաշտօքն աւերել, այնքան հեշտ, որքան հեշտ ուրուրը կթուցնի թուխս ու ձագին։

Երբ 1905 թուականի նոյեմբերի 18, Գանձակի անկար-

\* Экономический бытъ Государств. Крестьянъ Казахскаго уѣзда Елисаветп. Губер. Страница 44. А. Д. Ерицовъ 1886 г. Тифлисъ.

դութիւնների օրը, թուրք հրասակալումը էրը իսկոյն պաշարեցին երկաթուղու գիծը Դալլարից ջագամ և Ազոտափա՛, երկու օր յետոյ, այն է Նոյեմբերի 20 ին, կիւրուկէ, յիսնակի Բաշրիկնդան օրը, Կըռազէնի սահմանում յանկարծ երեաց մի զբահաւորուած հրասակախումը, մօտ 50 մարդ շրջապտու գիւղերից և քշեց տարաւ Կըռազէնապատկան 500 գլուխ տաւար, կանխօրէն սպանելով տաւարածին:

Լացն ու կոծը ընկաւ գիւղի մէջ, ալմուկ, երարանցում, ահաբեկումն տիրեց ո՛ննուրեք: Ամենըն էլ զգացին որ այդ ոկեղըն է երկանց, մեծ արհաւերքը աթշնամուկի ապագային է թողնուած: Գլուխները կորցւած, ապուշ կտրած Կըռազէնցիք շգիտէին ինչ խօսեն, ում ամեն, ինչ անեն. ձեռքները մեկնեցին գէպի երկինք և օգնութիւն հայցեցին, բայց նրանց հառաջանքը տեղ չըհասաւ, երկինք բարձր էր և մառախլապատ: Երեկոյեան մութը պատեց աշխարհը: Մոտիկից հօսող կուր գեար իւր ալիքների ձայն էր սփռում: Խոնաւ ափերից բարձրացող թանձր մառախուզը պատեց գրկեց փորբիկ Կըռազէնը: Մեծիրից ոչ ոք չքնեց այդ գիշեր, և ինչպէս քնէին, որ հանգստութեան, հոգւոյ թէ մարմնոյ հանգստութեան տակ քնէին: Մանուկներին էլ սահպմամը քնեցրին:

Անցաւ տագնապայից գիշերը, եկաւ տռաւոտ, երկուշարժի օր, նոյեմբերի 21 ըն է: Հեռու երեսում են մի նոր խումբ ձիաւորներ վայլուն զէնքերով: Նրանք կամաց կամաց, առանց պրաներում ահ ունենալու, մօտեցան դիւղին, ուր արգէն վայնասունը տիրում էր: Դիւղում որքան ձիանք և երեկուանից մնացած ապրանք կային, հերոսակները Փողովեցին, քշեցին, տաքան իրք և իրանց հաւալ սեփականութիւն: Այդ ազնուասիստ մարգիկ անհրաժեշտ համարեցին գնալու բոպէին զդուշացնել Կըռազէնցոց, թէ յետոյ նորից պէտքէ դան գիւղն այթեն և ընակիցներին ջարդեն... որովհետեւ այսունետեւ հայ շպէտքէ լինի աշխարհումն, հայութիւնը վերջացել է...

Հաստատ շգիտեմ թէ ով էր կազմակերպել Կըռազէնի պետայ յարձակուող խմբերը նոյեմբերի 20 և 21, միայն զբականապէս յայտնի է որ «Թողլուղ» կայարանի շրջակալում, որ մօտ էր Կըռազէնին առապատճեռմ էին Կուշչի դիւղացի Խոհանկարքէկովները իրանց կադմած խմբերով: Կազմակի հանգուցեալ գաւառապետ Առնոնդը նոյեմբերի 21 ին Ազոտափայից հեռագերել է փոխարքայի օգնական գեներալ Շիթինկինին հնաւեալը: «Թողլուղում թալանուած են միայն երկու խանութներ, սպանուած են երկու պահակներ: Զարադործներին

առաջնորդում է Զերդ գերազանցութեանը ծանօթ Աամմագը էղ Խազանդարեղովի եղբայրը։ \*

Ուպէզի հասկանալի լինի, թէ գաւառապեաը ինչի այդ ձևով է հեռադրում, ինչի փոխանոտկ Խոկական խմբապետի անունը տալու՝ գաւառապետ Առնոլոր Մամմագ ըէկի եղբօրն է համարում շաբադործների առաջնորդ։ Արա ըացադշութիւնը նշա մէջու է, որ Մամմագ ըէկի Խոկանքարեղովը այդ մէջոցին Թիֆլիզումն էր իր և 200 պատշաճութիւնների պարագալուն և աշխատում էր Պոխարբայի առաջ, չուտափայթ հեռացնել Վաղախից գաւառապետ Առնոլորին և ուրեմն տեսակցել էր նա և գեներալ Շիրինկինին։ Աւ այս բազմութեամբ ժանենուած պատգամուարութիւնը, լրագիրների առելով, ներկայացան Փոխարքային 1905 նոյեմբերի 18, Գանձակի անկարգութիւնների օրը։ Աւրեմն, ելք Մամմագ ըէկի Խոկանդարեղովը 200 ընկերներով Թիֆլիզում իւր անկեղծ հաւատարմութեան զգացմունքը սփռում էր ըարձրի շխանութեան զարշապարի տակ, հենց այդ մէջոցին նրա հարազատ եղբայրը հերսոնակների գլուխ անցած առպատկում էր Թովուղի շրջակացը և տիրացել էր երկաթուղուագծին։

Միայն գաւառապետ Առնոլորը շէր որ հեռադրում էր Թիֆլիզ, նոյնը արաւ միքանի անգամ և Թովուղի կալուածատէց Խոսութ ըէկի Սուլթանովը։ Աս 1905 թուականի գեկտեմբերի 3 ին հեռագրել է Թովուղից Թիֆլիզ զինուորական զլիաւոր շտամբին թէ Քեազիմ ազա Սուլթանովը և Մանսուր աղա Խոկանդարեղովը կազմել են աւազակային խումբ և կոտրածներ են սարջում։ \*\* Առաջին զլուում բացարեցի որ Խոսութ ըէկի սուլթանովն ունի Թովուղի կայարանում խանութներ, տներ հացի ամբողներ, որմաց, խանաշփաթ ժամանակից օգուտ քաղելով, քանդում, այրում էր անձնական թշնամի Մանսուր Խոկանդարեղովը։

Խնձելցէ, անցնենք կրկին Կըողենին։ Նոյեմբերի 22 ին, երեքշաբթի օրը, բոլք տռ բոլք Կըողենցիք սպասում էին նոր և աւելի խիստ յարձակումների։ Խորհրդակցում էին մեմեանց հետ և մի ելք չդանելով, նորից սուզւում էն իրանց սրտամաշ մասձմաների մէջ, նորից ապաւէն հայցելով երկնըթե։

Նոյեմբերի 23 ին, անօդնական մասցած Կըողենցիք վճռեցին տեղափոխուել ամբողջ հասարակութեամբ մերձակայ

\* Արշալուս Խոյեմք. 25 1905 թ. № 62.

\*\* Արշալուս 1905 թ. 70. դեկտ. 6.

թուրք Մանսուրի գիւղը՝ ապաւենելով նրանց մարզասիրութեան և օգնութեան վերայ: Մանսուրցիք և Կըողէնցիք, իրեւ մօտիկ գրացիներ, միշտ սիրով էին իրար հետ ուստի և Կըողէնը հիմք ունէր յուսաւ Մանսուրլուի վերայ: Խռնուած հասարակութիւնը, արագ կերպով վերցնելով իւր հետ թագացնելի հարստութիւնը և անհա աժեշտ պիտոքը, ճանապարհուեցին գէսպի Մանսուրի: Նրանք փակեցին իրանց շինութիւնները գուները, թողին այն ամենը լինչոր գժուար էր տեղափոխել, գատարկեցին գիւղը բնակիչներից և իրանք իրար խռնուած գնում էին գէսպի Մանսուրի:

Մանսուրլուեցիք ընդունեցին նրանց սիրով. տեղաւորեցին իրանց գեղջկական բնակարաններում և այդպիսով պահեցին Յօր ու գիշեր: Եբեք օր հանգիստ մնալով Մանսուրլիում, Կըողէնցիները կարծես սիրտ առան, յուսալով թէ գուցէ վտանգն անցաւ. . . Սակայն այդ խարուսիկ յոյս էր, ըստ որում նոյեմբերի 26 թէ 27 ին Մանսուրի հասաւ շրջապատ գիւղօքայից ժողովուած մի խաժմուժ ամբոխ և խստադոյն սպառնալիքով պահանջից Մանսուրլուեցիներից որ Կըողէնցիներին ըոլորին միասին վերադարձնեն իրանց գիւղը, Կողէն:

Ճակատագիրը ողբակի էր: Խնչողէս վարուեն թէ Մանսուրլուեցիք և թէ Կըողէնցիք: Հիւրասէր Մանսուրուեցիք ոչ կարող էին պաշտպանել տարարազդ հիւրերին և ոչ էլ կարող էին, փոքրաթիւլինելով, գիմադրել խաժմուժ եկտորների սպառնալի պահանջներին: Ուստի Կըողընցիները ակամայ զուրս եկան Մանսուրլուից, խումը խումը ուղղուեցին գէպի Կըողէն թոյլ ոտքերով, լեզուները կարկամած, սարսափիք երեսներին: Խաժմուժը զուրս հանեց Կըողէնցիներին Մանսուրլից, որպէսզի տիրանայ նրանց հետները փախցրած շարժական հարստութեանը:

Վերադարձնալով Կըողէն, հայերը միայն մի գիշեր կարողացան մնալ գիւղում, ըստ որում հետեւեալ օրը, հաւանականօրէն նոյեմբերի 27 ին, Կըողէնը ներկայացնում էր մի սոսկալի և աննկարագրելի տեսարան: Խռում էր գիւղը բուզազանլուից, Կարախանլուից, Զլովդարլուից, Սամազբայլուից և միւս գրացի գիւղերից հաւաքուած հազարաւոր, ամեն հասակի և սեռի խմբերից: Այդ տեղ կտեսնէիր և ծերեր, և երիտասարդներ և պատանիներ, կանայք և աղջկունը: Սրանք ազատօրէն պտաւում էին գիւղում, մտնում էին որ տունը կամենաւմ էին, մերցնում էին՝ տանում էին, ծիծազում էին հայերի վերայ քիթ ու պուտնգ էին ցոյց տալի և այլն, իսկ հայերը լեզուները փակած լոռութեամբ տանում էին ամեն տեսակ վիրաւորանքներ:

Վերջապէս բոլոր Կըողէնցիներին հաւաքեցին մէկ տեղ,  
բաժանեցին երկու մասի և ոչխարի հօտի նման յանձնեցին մի  
քանի մարդկանց որ քշեն տանեն թուրքերի գիւղերը: 120 հո-  
գի հայեր քշուեցին Բողազանլի և 108 հոգի Կարախանլի գիւ-  
ղերը: Հայերը ամենայն հարստութիւն թողած, մերկանգամ՝  
ոտաբորբիկ, քաղցած ու ծարաւ գերի էին գնում իրանց դրա-  
ցի թուրքերի մօտ:

Հայերին հեռացնելուց յետոյ Բողազանլուեցիք և միւս  
գիւղերի ընակիչները ամենայն հանդստութեամբ զբաղուեցին  
կըողէնցիների կողոպուտով ու յափշտակութեամբ և տների  
աւերումով: Գիւղի աւերումն և յափշտակութիւնը շարու-  
նակուեց 18 օր: Նըսսակները տարան կարաւաներով իւղ ու  
պանիր, կապոցներով տան սարք ու կարք, գիւղատնտեսա-  
կան հազարաւոր դործիքներ, ամբարներով ցորեն ու գարի,  
հարիւրաւոր սայլելով խոտ ու գարման, տների շինութիւն-  
ների փայտեղէն և քարեղէն մասեր, և այլն և այլն: Այսպէս  
միքանի օրում չէն, հարուստ գիւղը դարձաւ անմարդաբնակ  
և աւերակ: տների տեղերում երեսում էին միայն հողի կոյ-  
տեր, այդիները անտերական: Միայն մի տուն մնացել  
էր անձեռնմխելի, որովհետև նրան պահել էր իւր բնակութեան  
համար «յայտնի աւազակ թանդրիվերդու որդին»: \*

Գիւղական եկեղեցին իւր ամենայն որբութեամբ չկարո-  
ղացաւ զերծ մնալ բարբարոս աւերիչ ձեռքերեց: Նա կողոպ-  
տուեց ինչպէս Շամշադինու մի քահանայ հազորգել էր  
Մշակի մէջ \* «Աղստափա կայարանում յայտնի հաջի Ամ-  
պանառականի ձեռքով և զեկավարութեամբ»: Եկեղեցին ա-  
ւերելուց յետոյ, յեշեալ քահանայի տոելով, այդ վաճառա-  
կանը վերցրել է իւր համար անօթեղէնը, գըեանքը և զան-  
դակները»:

Կըողէնից կողոպտած իրեղէնները, տաւարը, ձիերը ու-  
խարները և այլ անառունները հեռատես թուրքերը շուտա-  
փոյթ ծախեցին հեռաւոր գիւղերում, որպէս զի ոչ մի հետք  
չմնայ և ամբիծ անունների վերայ ստուեր չմնայ: Խոկ միւս  
տեսակի կողոպուտները, ցորեն, գարի, խոտ, իւղ, պանիր և  
այլ կարիք չկար անհետացնելու... Յիշեալ հեռատեսութիւնը  
կողոպուտների ըլ կորցնելու մասին՝ անշուշտ տեղի է ունե-  
ցել և այլ հայ գիւղերում, որոնք ենթարկուել են կողոպու-  
ցեր, Պարարաղում, Նախիջևանում, Ղազախում և այլ տե-  
ղերում:

Քաջիւրունի.

(Հարունակելի)